

# ԲԱՆԱԽՈՍ

Նոյեմբեր 29, 1996 թ.վ.

ՀԱՍԻՐ 1

## ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի ամերիկյան համալսարանը սկսում է «Դասախոսությունների շարք» ծրագիրը, որով պարբերաբար բանախոսելու կիրավիրվեն Հայաստանում և արտերկրում հանրահայտ անձինք: Դասախոսությունների թեմաները կլինեն մերօրյա հրատապ հարցերը: Ծրագրի նպատակն է հնարավորություն տալ կազմակերպել մտքերի ազատ փոխանակման հավաքներ, որոնք կվերածվեն բաց բանախոսության և քննարկման:

Դասախոսությունները կանցկացվեն երեք շաբաթը մեկ՝ հինգշաբթի օրերին, ժամը 18:00 - 19:00-ը, ՀԱՀ 5-րդ հարկի փոքր դահլիճում: Բանախոսը կներկայացնի դասախոսության թեման, որից հետո կպատասխանի ունկնդիրների գրավոր հարցերին: Դասախոսություններն անվճար են և ազատ՝ յուրաքանչյուրի համար:

Կախված բանախոսի նախընտրությունից, դասախոսությունները հիմնականում կլինեն հայերեն կամ անգլերեն՝ համապատասխան համընթաց թարգմանությամբ:


«Բանախոս» տեղեկագրում կիրառարկվեն դասախոսությունների տեքստերը և ընտրովի հարցերն ու պատասխանները: Այն կտեղեկացնի հետագա դասախոսությունների, ինչպես նաև ՀԱՀ-ի այլ գործունեությունների մասին:

1996 թվ. նոյեմբերի 14-ին ծրագրի առաջին հյուրն էր ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ Բագրատ Ասատրյանը: Ընթերցողին ենք ներկայացնում նրա կարդացած դասախոսության տեքստը:

## ԴԱՍԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Բագրատ Ասատրյան  
ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ

Դրամավարկային քաղաքականությունը Հայաստանում բավականին նոր ինստիտուտ է: Դրա մասին, իբրև տնտեսական քաղաքականության տարր, մենք, թերևս, սկսեցինք խոսել 1994 թվականին: Դրա նախադրյալը հանդիսանում էր այն, որ 1993 թ. ընթացքում ձևավորվեց բանկային համակարգի վերաբերյալ օրենսդրությունը, հստակեցվեց, թե ինչ է Կենտրոնական բանկը, ինչով պետք է զբաղվի: 1993-ի վերջին շրջանառության մեջ դրվեց ազգային դրամը, որը հնարավորություն տվեց ընդհանրապես իրականացնել դրամավարկային քաղաքականություն: Սա չի նշանակում, որ նախկինում մեր տնտեսության մեջ բացակայել են դրամավարկային քաղաքականությունը կամ նրա առանձին տարրերը: Սակայն, դրանք, թերևս, միայն առանձին տարրեր էին, որովհետև պահպանվում էր միասնական ռուբլու գոտին, կար խորհրդային Միության այդ վերջին ինստիտուտը, ինչն այն ժամանակ արդեն անկախացած պետություններին որոշակի շրջա-



նակի մեջ էր դնում: Իհարկե, այդ պետությունները փորձում էին իրենց շահերով ղեկավարվել: Հայաստանում տնտեսական քաղաքականության մշակման և իրագործման տեսանկյունից մեր մոտեցումները ձևավորվեցին դեռևս 1990 թվին. մենք կայացրել ենք վճիռներ, որոնք էապես տարբերվում էին այն քաղաքականությունից, որոնք դեռ առաջին փուլում պահպանվող խորհրդային Միության շրջանակներում և հետագայում ևս իրականացնում էին նորանկախ պետությունները: Սակայն, դրամավարկային քաղաքակա-

«Մենք իրավիճակին չէինք տիրապետում, չէինք հասկանում անգամ, թե ինչ էր կատարվում:»

նության տեսանկյունից մենք, ինչպես նաև այլ հանրապետություններ, փորձում էին առիթներից օգտվել, ռուբլու համար պատասխանատու Ռուսաստանից ինչ-որ օգուտներ քաղել: Հիշեցնեն վարկային էմսիաների պատմությունը, որոնք ինքնին, եթե խոսենք տնտեսական քաղաքականության գաղափարախոսության մասին, ըստ էության





**Բագրատ Ասատրյանը** ծնվել է 1956 թ. փետրվարի 2-ին, Սիսիանի Դարպաս գյու-

ղում:

1973 թ. ավարտել է Երևանի թիվ 132 միջնակարգ դպրոցը: Նույն թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը և 1977 թ. ավարտել Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի ֆինանսահաշվային ֆակուլտետը:

1977-78 թթ. աշխատել է արտադրական ձեռնարկությունում որպես հաշվապահ, այնուհետև՝ տնտեսագետ: 1978-90 թթ. աշխատել է ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտում, նախ որպես տնտեսագետ, ապա՝ ավագ գիտաշխատող: 1986-90 թթ. դասավանդել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտում: 1985 թ-ից տնտեսագիտության թեկնածու է: Հեղինակ է 3 մենագրությունների և մի քանի տասնյակ գիտական աշխատությունների ընդհանուր տնտեսագիտության, կարգի կառավարման, զբաղվածության, ուրբանիզացիայի և ժողովրդագրության հիմնախնդիրների ասպարեզում:

1990 թ. ընտրվել է նորակախ Հայաստանի Հանրապետության առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր: 1990-94 թթ. եղել է ՀՀ Գերագույն խորհրդի առողջապահության և սոցիալական հարցերի հանձնաժողովի նախագահ:

1994 թ. հունվարի 12-ին ընտրվել է ՀՀ Կենտրոնական բանկի նախագահ:

1995 թ-ից ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր է:

Ամուսնացած է, ունի երկու որդի:

անհերթ ինստիտուտներ էին: Սակայն ժամանակի համար դա բավականին հետաքրքիր լծակ էր. կարևոր էր ինչ-որ մի օգուտ բաղել՝ պատասխանատվությունը ներքին քաղաքականության համար փորձելով դնել Ռուսաստանի, նրա Կենտրոնական բանկի վրա, որը էմիտեմ էր հանդիսանում ռուբլու և իր վրա էր կրում դրամավարկային քաղաքականության բոլոր գործողությունների պատասխանատվությունը:

1994 թվականը առաջին տարին էր, որ մեր պետության պատմության մեջ հասարակության և այն ժամանակվա օրենսդրության համաձայն մշակվեց և օրենսդիրի դատին ներկայացվեց դրամավարկային քաղաքականության առաջին ծրագիրը: Ինքնին դրամավարկային քաղաքականության ծրագիր ասածը բոլոր երկրներում և համակարգերում մեկ նպատակ ունի՝ կայունությունը: Իհարկե, սա ձեռք է բերվում այն լծակների միջոցով, որը համապատասխան երկրների օրենսդրությունը շնորհում է Կենտրոնական բանկերին: Այդ լծակները, միջոցները որակապես տարբերվում են թե տարբեր երկրներում, թե Հայաստանում՝ անցած երեք տարիների տեսանկյունից: Այս առումով, երեք վերադառնալիս այն խնդիրներին կամ միջոցներին, որոնց կիրառմամբ ուզում էինք նպատակին հասնել, ապա, ինչ խոսք, մենք որակական տեղաշարժեր ենք ապրել: 1994 թվական մենք մտանք մի իրավիճակում, երբ դրամը շրջանառության մեջ մտցնելուց հետո առաջին մեկ-երկու ամիսների ընթացքում սղածի մակարդակը պարզապես չափվում էր շաբաթը մի քանի պատիկությամբ: Մեր համար բավականին նոր երևույթներ էին: Անկեղծ ասեմ, մենք իրավիճակին ընդհանրապես չէինք տիրապետում, չէինք հասկանում անգամ, թե ինչ էր կատարվում: Սակայն այդ ժամանակ մեր կողմից մշակվեց առաջին դրամավարկային քաղաքականությունը, որի հիմնական նպատակը, իհարկե, այդ բարձր տատանումների ժամանակահատվածում սղածը կառավարելի դարձնելն էր: Մեր առջև դնում էինք նաև լայն խնդիրներ, այդ թվում՝ տնտեսության շարունակվող անկման կասեցումը: 1992 թվին մեզանում համախառն

ներքին արդյունքի անկումը կազմել էր 52 %, 1993-ին, թեև կրճատվել էր, բայց բավական Լական թվերի մասին էր խոսվում: Այս պարագայում, ինչ խոսք, հիմնական խնդիրը, որ մենք պետք է դնեինք տնտեսական քաղաքականության իմաստով և որին պետք է նպատակադրված լինեին դրամավարկային քաղաքականությունը, դա անկման կասեցումն էր:

Այսօրվա տեսանկյունից, երեք դիտենք վերոհիշյալ առաջին ծրագիրը, որը ներկայացվել էր այն ժամանակվա Գերագույն խորհրդում, ապա այն ավելի շուտ հիշեցնում է մի շատ կոպիտ գործիք, որով մենք փորձում էինք ներագրել տնտեսական գործընթացների վրա, քան կառավարման լծակ: Անգամ հիշում եմ, երբ ԳԽ-ում քննարկվում էր ցուցանիշների հիմնական շարքը, մեծ բանավեճի առարկա դարձավ, թե արդյոք ԳԽ-ն չպետք է հաստատի շրջանառության մեջ եղող կանխիկի ծավալը:

Դա, անշուշտ, գալիս էր դրամավարկային քաղաքականության մասին մեր պատկերացումներից, անփորձությունից, ինչպես նաև հասարակության, օրենսդիրի կողմից կարճ ժամանակում արդյունքի հասնելու, երբ ծանր իրավիճակը կառավարելի դարձնելու

**«Գտնում էինք, որ առաջին փուլում վարչական բնույթ կրող վճիռներով շատ շուտով ինչ-որ արդյունքի կհասնենք:»**

ձգտումից:

Ծրագիրն ընդունվեց և, ինչը կարևոր է, պաշտպանվեց կառավարության կողմից: Մի կառավարություն, որը գտնվում էր բավականին դժվար կացության մեջ, (հիշենք 1994 թվի սոցիալական վիճակը), և, ըստ իս, նրանից որոշակի հերոսություն էր պահանջվում այդ քայլին գնալու համար: Մենք ձեռնամուխ եղանք այդ ծրագրով նախանշված միջոցառումների իրականացմանը, որտեղ առաջին և ամենակարևոր տարրը բյուջեի դեֆիցիտի վարկավորման սահմանափակման խնդիրն էր: Այսօրվա տեսանկյունից գուցե չհնչի, բայց այն ժամանակ դա մի փոքր անհասկանալի խնդիր էր թվում: Հիշում եմ, որ իմ նշանակումից մի քանի օր առաջ (ԿԲ նախագահին խորհրդարանն է հաստատում) արտահերթ նիստ էր հրավիրված, որտեղ պատգամավորները քննարկում էին բյուջեին փող տալու հարցը: Եվ մնամատիպ հարցերը որևէ առարկության չէին հանդիպում, որովհետև մեզանում ընկալումն այն էր, որ կան պորբլեմներ, որոնք պետք է լուծել, և ճանապարհներից մեկը փող քաց թողնելն է:




Հիշատակվածը եւ կանվանելի, քերև, մեր դրամավարկային քաղաքականության առաջին փուլը, որը կարելի է կոչել ձևավորման փուլ: Այն ժամանակ մեր գործողությունների մեջ շատ ավելի տեղիք էինք տալիս վարչական վճիռներին, սահմանափակումներին: Մասնավորապես, բվարկեմ վճիռներ, որոնք այսօր ուտերը թոթովելով կարելի է վերհիշել: Առաջին որոշումներից մեկը, որ դրամավարկային քաղաքականության կարևորագույն էլեմենտներից էր հանդիսանում, դա բանկերի համար տոկոսադրույքի ներքին սահմանի հաստատումն էր: Փետրվարի սկզբին մենք սահմանեցինք, որ բանկերը չեն կարող վարկավորում իրականացնել 360-ից պակաս տոկոսադրույքով: Մեկ այլ օրինակ՝ կանխիկ դրամ ստանալու սահմանափակումը: Մենք ինքներս շրջանառության մեջ դրեցինք երկրորդ փող հասկացողությունը, որն, իհարկե, ամտեսական քաղաքականության իրականացման նորմալ տարր կամ լծակ պետք չէ համարել:

Մենք գտնում էինք, որ առաջին փուլում վարչական բնույթ կրող այս վճիռներով կարող ենք շատ շուտով

ինչ-որ արդյունքի հասնել, և ժամակակի ընթացքում դրանք սպառվելով ցույց տվեցին իրենց արդյունավետությունը: Արդեն 1994 թվի կեսին զգացինք, որ սղածը այն երևույթն է, որը կարելի է կառավարել: Համենայն դեպս, մայիսից հետո մենք գործ ունեինք ամսական սղածի այնպիսի բվերի հետ, որոնք միավորներով էին չափվում: Այդ պահին մենք դա համարում էինք կարևորագույն նվաճումներից մեկը: Ազգային դրամը շրջանառության մեջ դնելիս մենք, օրինակ, չգիտեինք ինչ է պահուստ ասածը, որովհետև չունեինք և չէինք էլ խոսում դրա մասին: Արժուքային քաղաքականության կարևորագույն լծակներից մեկը դառել էր այն, որ պատուհանից շատ ուշադիր նայում էինք, թե փողոցում կանգնած «դալայները» ինչ վճիռներ են կայացնում և փորձում նրանց գործողություններից առաջ ընկնել: Ասեմ, որ սա այն պարագայում, երբ երկիրը չուներ պահուստներ, շատ խղճով միջոցներ էին գալիս, որոնք ուղղվում էին հիմնական խնդիրների լուծմանը, ԿԲ-ն խեղդված էր միջնորդություններով, բավականին ազդեցիկ միջոց և լծակ էր: 1994 թվի երկրորդ կեսին արդեն զգացինք, որ վի-

ճակր միանգամայն կառավարելի է: Դիշա է, դեռևս կառավարելի չէին այն լծակները, որոնց տիրապետում էինք: Բայց դրանց միջոցով արդեն կարող էինք ավելի ակտիվ դիրք բռնել: Չուգահեռ մենք գնում էինք ֆինանսական շուկայի, նրա առանձին սեգմենտների, ինստիտուցիոնալ ձևավորմանը, Կենտրոնական բանկում ընթանում էին լուրջ կառուցվածքային տեղաշարժեր, կադրերի համալրում, որոնց պարզապես փորձում էինք գտնել այնտեղից, որտեղից հնարավոր էր: Սա, քերև, բնութագրում է մեր մուտքը դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունավետության տեսակետից, երկրորդ փուլ, երբ արդեն ավելի հստակ էինք դնում մեր խնդիրները: Իսկ հստակությունն, իհարկե, բնութագրում են ծրագրային որոշակի ցուցանիշների ձևավորումը և քաղաքականությունն իրականացնելիս դրանց հասնելը: Երկրորդ փուլը կարևորում ենք նաև այն տեսանկյունից, որ առաջին անգամ, քերև, ոչ թե մտածում էինք ինքնուրույն դրամավարկային

Ընթացիկ հաշվի դեֆիցիտի, արտահանման և ներմուծման տեսակարար կշիռները ՀՆԱ-ի մեջ տոկոսային արտահայտությամբ





քաղաքականությունն ձևավորելու մասին, այլ մեզանում կառավարության հետ կազմվեց համատեղ ծրագիր: Այն իր արտահայտությունը գտավ անտեսական քաղաքականության վերաբերյալ ՀՀ կառավարության և ԿԲ-ի համատեղ հայտարարությունում, որտեղ ձգտում էինք մեր լծակները համադրելի դարձնել տնտեսական և ֆիսկալ քաղաքականության հետ: Այս փուլի կարևորագույն բաղադրիչներից մեկը հանդիսացավ նաև այն, որ այդ ծրագրերը ստացան միջազգային ֆինանսական կազմակերպությունների պաշտպանությունն ու օժանդակությունը:

1994-ի վերջին մենք ստացանք առաջին վարկերը, որոնք նպատակաուղղված էին ԿԲ-ի պահուստների ձևավորմանը: Ըստ իս, հենց այդ պահից պետք է խոսել ԿԲ-ի այդ նոր պահուստների, ինստիտուտի ձևավորման մասին: Այս պարագայում մենք ձգտում էինք հստակեցնել մեր խնդիրները նաև լայն տնտեսական քաղաքականության իմաստով: Մասնավորապես, խնդիր դրվեց (ինչը կարևորագույն խնդիրն էր 1995 թվականի համար), հասնել մակրոտնտեսական կայունացման և իրականացնել բարեփոխումների այն ծրագիրը, որը, ըստ էության, վերակենդանացվեց 1994 թվականի ընթացքում: 1995 թվականն արդեն մեր գործունեության և դրամավարկային քաղաքականության իրականացման տեսանկյունից ամենաարդյունավետ տարին կարող ենք համարել: Աստիճանաբար «ամպերը» վերացան և մեզանում հաստատվեց կայունությունը:

Հետագայում փորձում էինք մեր քաղաքականությունը ավելի ճկուն դարձնել, առավել լայնորեն կիրառել այն բոլոր միջոցները, որոնք մեզ օրենքը հնարավորություն էր տալիս օգտագործել և կիրառել: Դրամավարկային քաղաքականության երկրորդ փուլի հիմնական բնութագրերը անփոփոխ են մնացել մինչև վերջին ժամանակահատվածը: Այն կարելի է համարել անցումային փուլ:

Ստեղծված բազայի տեսանկյունից մենք դրամավարկային քաղաքականության մի նոր փուլ ենք մտնում, որը կարելի է անվանել ակտիվ

փուլ: Վերջինիս պարագայում մենք ենթադրում ենք, որ դրամավարկային քաղաքականությունը արդեն իր ըստ էության պահանջները պետք է դնի իրականացվող տնտեսական և ֆիսկալ քաղաքականության նկատմամբ: Այս փուլի սկիզբը ես համարում եմ նոր օրենսդրության ձևավորումը: 1996-ի հունիսին ընդունվեցին նոր օրենքներ Կենտրոնական բանկի, բանկային գործունեության մասին, հաստատվեցին նոր օրենսդրական ակտեր բանկերի սնանկացման, բանկային գաղտնիքի մասին, ինչը կատարելագործեց այն օրենսդրական բազան, որի հետ գործ ունեինք նախորդ տարիների ընթացքում: Այն ավելի հաստատուն դարձրեց ԿԲ-ի ինքնուրույնությունը՝ վճիռները կայացնելիս, ծրագրեր մշակելիս և իրագործելիս: Մասնավորապես, եթե նախկինում դրամավարկային քաղաքականության ծրագիրը պետք է հաստատվեր խորհրդարանի կողմից և ամեն անգամ բանավեճերի մեջ էինք մտնում, առայն, այն լծակների

**«Օրենքի ձևակերպումը շատ գեղեցիկ են համարում. Կենտրոնական բանկը հաշվետու է հասարակության առջև, և այդ հաշվետվությունը հրապարակվում է Ազգային ժողովում:»**

կիրառման տեսանկյունից, որը մենք պետք է տարվա ընթացքում օգտագործեինք կամ այն խնդիրների մասով, որոնք մեր համար կարևոր էինք տեսնում, ապա այժմ ԿԲ-ն այս առումով ազատ է: Այն, ըստ էության, հաշվետու չէ որևէ մարմնի իրականացվող քաղաքականության համար: ԿԲ-ն ղեկավարվում է օրենսդրության մեջ և հաշվետու է միայն հասարակության առջև: Օրենքի ձևակերպումը շատ գեղեցիկ են համարում. Կենտրոնական բանկը հաշվետու է հասարակության առջև, և այդ հաշվետվությունը հրապարակվում է Ազգային ժողովում:

Խնդիրները դնելիս մեր հիմնական գործընկերը բյուջեն է, մեր մտահոգության գլխավոր առարկան

մշտապես հանդիսանում է ֆիսկալ քաղաքականությունը: Սեզ ազատություն տվողը, ինչպես նաև ճնշողը, ֆիսկալ իրականացվող հարկարյուջեության քաղաքականության արդյունավետությունն է: Հանրապետությունում իրականացվող տնտեսական քաղաքականության հիմքում դրված հիմնախնդիրները կազմել են մեր ֆիսկալ քաղաքականության էությունը: Դեֆիցիտի կրճատման խնդիրը կարևորագույն հարցադրումներից էր, որը մեզանում տնտեսական քաղաքականություն իրականացնողները իրենց առջև դրել էին և դնում են նաև այսօր: 1997 թվականի բյուջեի նախագծում կտրուկ տեղաշարժի հարց է դրվում՝ բյուջեի դեֆիցիտը մոտավորապես կրկնակի կրճատելու խնդիրը: Սա ավելի կառավարելի կարող է դարձնել այն տնտեսական գործընթացները, որոնց հետ մենք գործ ունենք:

Հակիրճ կուզեի կանգ առնել արձանագրվող դրամական զանգվածի խնդիրն: Ունեցած պատկերը ամբողջովին չի արտահայտում այն իրականությունը, որը մենք ունենք ՀՀ-ում: Եթե փորձենք ուշադիր գնահատել մեր տնտեսությունը, ապա փիճակագրության մեջ գրանցված քվերը կարող են կրկնապատկվել: Սա վերաբերում է ոչ միայն կանխիկ դրամական զանգվածին: Ոչ մեկի համար գաղտնիք չէ, որ ՀՀ-ում առկա է որոշակի և բավականին ծավալուն արտարժույթային զանգված, որը, ըստ էության, գտնվում է իրական շրջանառության մեջ: Բացի դրանից, մեր իրականության մեջ առկա է սովորական բանկային գործունեություն. մարդիկ իրար վարկեր, պարտքեր են տալիս: Սա մեր մեծագույն պրոբլեմներից մեկն է: Այն բնութագրում է Հայաստանում սովորական տնտեսության առկայությունը և նրա բավականին մեծ ծավալները: Դրա հետևանքով շատ ժամանակ դժվար է լինում մեր կողմից քաղաքականության իրականացումը. միշտ բախվում ենք սովորական տնտեսությանը, այդ հատվածի դրսևորումների հետ: Իսկ վերջիններս միշտ չէ, որ մեր նպատակների, շահերի առումով նույն հունով են գնում, զարգանում:



### ՀԱՐՅԵՐ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

*- Ինչպիսի՞ն է ԿԲ-ի ազդեցությունը սղաճի և փոխարժեքների տարբերությունների վրա: Ի՞նչ կասեիք ամերիկյան դոլարի արժեզրկման առնչությամբ:*

- Նախ ասեմ, որ մենք ուզում ենք հրաժարվել շուկայի անխափր բոլոր սեզմենտների վրա ուղղակի ներազդեցության այն հնարավորություններից, որոնք մենք կարող ենք ունենալ: Առնվազն վերջին վեց ամսվա ընթացքում ԿԲ-ն պարզապես դուրս է եկել արժուրային շուկայից: Համենայն դեպս, կարգավորման այն մոդելներից, որոնք կիրառվում էին 1994-1995 թթ. մենք հրաժարվել ենք: Փոխարժեքը մեզանում արդեն ազատ շուկայական կատեգորիա է. սուբյեկտները իրենք հանդիպում և իրենք էլ լուծում են հարցերը: Իհարկե, կտրուկ տատանումների ժամանակ, առանձին իրավիճակներում մեր միջամտությունը կա և լինելու է: Բայց, համենայն դեպս, մեր հիմնական նպատակը սղաճի կարգավորումը և պահուստների կառավարումն է՝ լայն իմաստով: Մենք պետք է հետևենք, որ ՀՀ պահուստները չնվազեն: Իսկ փոխարժեքների կարգավորումը ընդամենը միջոց է, որին մենք կարող ենք դիմել կամ ոչ:

Փոխարժեքն ու սղաճը իրար հետ ուղղակիորեն կապված են: Վերջինս պետք չէ տեսնել թվաբանական արտահայտությունների մեջ, քանի որ մի շարք բավականին բարդ երևույթների ազդեցությունը կա, որով կարող է սպայմանավորվել սղաճի և փոխարժեքների տատանման տարբերությունը: Նման բան Հայաստանում նկատվեց 1995-ին, երբ սղաճը կազմեց 32.3%, այն դեպքում, երբ փոխարժեքները կայուն էին: Իսկապես, այստեղ մենք գործ ունեինք, կոպիտ ասած, դոլարի արժեզրկման հետ: Սակայն սա մի քիչ ավելի լայն խնդիր էր: Բարձր սղաճից հետո մեր փողը՝ դրամը, քերարժեքավորված էր: Եվ դրամի արժեքն էլ վերականգնում էինք: Բացի դրանից, իրենց ազդեցությունը բողեցին այնպիսի գործոններ, ինչպիսիք էին ապրանքային շուկայի զարգացումը, քաղաքական իրավիճակի փոփոխությունը, որոնք ավելի մատչելի էին դարձնում հենց դոլարային արտահայտությամբ առանձին ապրանքատեսակները Հայաստանում: Եվ կարելի է ասել, կատարվում էր դոլարային արժեզրկում, որի արտահայտություններից մեկը համոզիասցավ փոխարժեքների և սղաճի միջև առկա տարբերությունը:

*- Կենտրոնական բանկի գնահատմամբ, ամսեկան կամ տարեկան որքա՞ն են կազմում արտասահմանում ապրող և աշխատող ՀՀ քաղաքացիների կողմից հանրապետություն ուղարկվող տարադրամային ներմուծումները:*

- Փորձում ենք գնահատականներ տալ, հաշվառումը ավելի հստակ դիտքերի վրա դնելու համար անգամ աշխատեցինք մարտային վարչության հետ: Ներիտքը մենք զգում ենք: Ի դեպ, այն ևս սպայմանավորեց 1995 թվականի այն իրավիճակը, որ 32.3 % սղաճի սպայմաններում փոխարժեքները կայուն էին: Կա երեք աղբյուր: Նախ՝ ներդրումները, որոնց ծավալը շատ դժվար է գնահատել: 1995 թվականի ընթացքում մեր հայրենակիցների ներդրումները կազմել են մոտ 30 միլիոն դոլար: Մարդասիրական կամ ապրանքների տեսքով մուտք գործող, ինչպես նաև զանազան կազմակերպությունների միջոցով եկող գումարները, թերևս, կարելի է գնահատել մինչև 120-130 միլիոն դոլար: Ուղղակի դրամական մուտքերը, ըստ իս, կարող է կազմել մինչև 100 միլիոն: Գու-

մարելով կտեսնենք, որ մեզանում վճարային դեֆիցիտը ունի իր ծածկույթը: Սրանք, իհարկե, հուսալի աղբյուրներ պետք չէ համարել: Դրանք շատ անկայուն են քե հոսքերի ծավալի, քե դրսևորումների տեսանկյունից: Հուսով ենք, որ առաջիկայում ավելի դրսևորվող կլինեն ներդրումային մուտքերը:

*- Հայաստանի ինտեգրացումը և հարմարվելու միջազգային ֆինանսական կազմակերպություններին, մասնավոր ապես, Միջազգային արժուրային հիմնադրամին, շատ արագ կատարվեց: Մեկնարանեք, խնդրեմ, այդ գործընթացը Կենտրոնական բանկի տեսանկյունից:*

- Արված հարցադրումը մեզ համար սկզբունքային հարցադրումներից մեկն է, քանի որ մենք եղել ենք մի երկիր, որը ավելի շատ ջերմոցի էր նման, պատմեշված ամբողջ աշխարհից, որն ուներ իր բարբերը, սոստեսական հարաբերությունները, և բոլոր տեսակավարող սուբյեկտների դրսևորումները էապես, որակապես տարբերվում էին այն ռեժիմներից, նորմերից, որով ապրում էր աշխարհը: Ջերմոցը փլուզվեց և մենք բավականին ծանր կացության մեջ էինք: Ոչ միայն չգիտեինք, քե ինչ են իրենցից ներկայացնում Համաշխարհային բանկը կամ Միջազգային արժուրային հիմնադրամը, այլ ուղղակի չգիտեինք, քե ինչ է շուկան: Գրքերից, տեսությամբ ծանոթ էինք: Բայց մի բան է կարողալը, լսելը, այլ բան սեփական կաշվի վրա զգալը: Սա առավելապես վերաբերում է մեզանում գործող տնտեսավարող սուբյեկտներին: Յուրաքանչյուր ձեռնարկատեր, որը նախկինում եղել է բավականին հաջողակ և հետագայում պարզել, որ այդ հաջողությունը արհեստական է, այսօր փորձում է իր դրսևորումները գտնել: Այս առումով մենք իսկապես մեծ օժանդակություն ստացանք հենց վերը նշված ինստիտուտների կողմից: Դրանց մենք անդամակցեցինք 1992-ից: Մինչև բուն ֆինանսական հարաբերությունների ձևավորումը մենք բավականին լուրջ տեխնիկական օժանդակություն ենք ստացել այդ կազմակերպություններից: Բազմաթիվ առաքելություններ էին ժամանում, որոնք մեզ ուղղություն էին տալիս, հսկայական գրականություն, մշակումներ տրամադրում 1992, 1993, 1994 թվականներին: Ասեմ, որ հարաբերությունները եղել են բավականին ջերմ, գործնական: Հաճախ մենք էինք խնդրում, որ առանձին ոլորտների վերաբերյալ մասնագետներ գան: Ես շատ բարձր եմ համարում այս համագործակցությունը, որը մեզ հնարավորություն տվեց տիրապետել նրան, ինչով ապրում, ղեկավարվում է աշխարհը:

1994 թ. վերջից մեր հարաբերությունները ավելի գործնական են դարձել: Այսօր էլ ես շատ կարևորում եմ այդ տեխնիկական, մասնագիտական օժանդակությունը, որ ստանում ենք: Մենք առավել աշխույժ համագործակցում ենք ՄԱՀ-ի հետ, տարեկան ընդունում շուրջ 5-7 առաքելություն, ինքս ունեմ մշտական խորհրդակցանքներ, որոնք այսօր երեքն են: Հայաստանում արդեն կան այդ կազմակերպությունների ներկայացուցիչները, մշտական համագործակցություն է գնում՝ առավել ևս, որ դա դրոշակի ֆինանսական օժանդակությամբ է ամրացված:

*- Դրամավարկային քաղաքականության նպատակային իրականացման համար Դուք հաշվարկում եք, արդյոք, քե ի՞նչ արագությամբ են շրջանառություն անում և աճում դրամական միջոցները սովորային տնտեսության մեջ:*



- Իհարկե, դա մեր մշտական ձգտումն է՝ փորձել գնահատել, նաև՝ ակտիվորեն ներագրել այդ տարրի վրա: Ասեմ, որ վերջին շրջանում մեզ հաջողվում է որոշակիորեն ազդել այդ դր սևորման վրա: Բայց կարող եմ անկեղծ սասել, որ գործ ունենք անկառավարելի զանգվածի հետ: Մենք երբեք չենք կարողացել այդ զանգվածին ուղղություն տալ, այն է՝ ներգրավել բանկային համակարգ: Սա մի խնդիր է, որը մենք շատ կարևոր ենք տեսնում 1997 թվականի համար: Կարծում ենք, որ սա համակարգային փոփոխությունների արդյունք կարող է հանդիսանալ: Այստեղ խոսքը պետք է զնա բանկային համակարգի առողջացման այն ծրագրերի մասին, որոնց վրա այժմ աշխատում ենք, ինչպես նաև բազմաթիվ այլ լուծումների մասին: Իհարկե, այս ուղղությամբ միայն Կենտրոնական բանկը չէ որ պետք է աշխատի: Հուսով ենք, որ նաև կառավարությունը իր ծրագրերը կմշակի և համապատասխան խնդիրներ կդնի: Բավականին բարդ խնդիր է, բայց որը որոշիչ է լինելու տնտեսական քաղաքականության արդյունավետության տեսանկյունից:


- *Կյանդրեի պարզաբանք Կենտրոնական բանկ - կառավարություն հարաբերությունների մեխանիզմը: Եվ երկրորդ հարցը. Հայաստանում արդեն գործում են մի քանի օտարերկրյա բանկեր, և այդ գործընթացը պետք է զարգանա: Ինչպիսի՞նն է Ձեր գնահատականը այդ դրսևորման նկատմամբ, որքանո՞վ են հայաստանյան առևտրային բանկերը պատրաստ մրցակցությամբ:*

- Մեր հարաբերությունները կառավարության հետ կանոնակարգված են գործող օրենքով: Եթե ինքնին փորձենք գնահատել բանկային օրենսդրությունը և Կենտրոնական բանկի մասին օրենքը, ապա հստակ կերևա, որ գնացել ենք մեր հնարավորությունների, լիա-

զորությունների, իրավունքների, քերես, ամենալավատ կանոնակարգմանը: Պարզասխա տող առ տող գրված է, թե ում և ինչպես պետք է դիմենք, որ մարմնի հետ կարող ենք համագործակցել, ում նկատմամբ եզրակացություն ներկայացնել և այլն: Հարաբերությունները հավասարակշռված են և կարող են լինել միայն այդպես: Այս տարվա նվաճումներից մեկը համարում են այն, որ կառավարության, համապատասխան օղակների հետ համագործակցությունը ավելի արդյունավետ է դարձել:

Երկրորդ հարցի առնչությամբ նշեմ, որ ինքս ազատ մտածելակերպ ունեմ: Հիշում եմ, երբ մեզ մոտ առաջին արտասահմանյան բանկը պետք է բացվեր, հայաստանյան բանկերը հարցնում էին, թե ի՞նչ է լինելու: Ես պատասխանում էի, որ կլինի այն, ինչ պետք է լինի: Համեմայն դեպք, ինքս որևէ բայլ չեմ անի, որ հայրենական բանկ կատեգորիան առաջնային դարձնեմ: Բանկը՝ բանկ է: Մենք պետք է ունենանք բանկեր, լավ բանկեր, և որևէ գործողություն չեմ անի՝ արտասահմանյան կապիտալը սահմանափակելու կամ ինչ-որ արգելքներ դնելու իմաստով: Սա մեզ համար քաղաքական տարր է հանդիսանում: Ի դեպ, արտասահմանյան մեր գործընկերները այստեղի ամենաբարձր նվաճումը համարում են բանկային գործունեության կանոնակարգվածության աստիճանը: Հայաստանն անդամակցել է բազելյան կոմիտեին, ընդ որում, ղեկավարելով մի խումբ երկրներ՝ Անդրկովկասի, Սիջիան Ասիայի: Սա ևս վերև սավաճի գնահատականն է: Եվ դեպի այս կանոնակարգված դաշտն արդեն կապիտալի ձգտում կա: Այսօր մեր բանկերի կանոնադրական կապիտալի շուրջ 50% արտասահմանյան կապիտալն է կազմում: Ազատական այդ վերաբերմունքը մենք շարունակելու ենք նաև առաջիկայում և հուսով ենք, որ սա բանկային համակարգի զարգացման լուրջ երաշխիք է լինելու:

ՀԻՆԳՇԱԲԹԻ, ԳԵԿՏԵՄԵՐԵՐԻ 5-ԻՆ



ՀՀ-ում Համաշխարհային բանկի լիազոր ներկայացուցիչ

ՎԱՀՐԱՄ ՆԵՐՍԻՍՅԱՆՅԸ

ներկայացնում է

«ՀԱՄԱՇՔԱՐՀԱՅԻՆ ԲԱՆԿԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՁ»

Դեկտեմբերի 5-ին, ժամը 18:00

Հայաստանի ամերիկյան համալսարանի փոքր դահլիճ  
Հասցեն՝ Երևան, Բաղրամյան 40  
Հեռ. 27-16-58

Մուտքն ազատ է



ԲԱՆԱԽՈՍ

«Դասախոսությունների շարք»  
ծրագրի տեղեկագիր

Ծրագրի ղեկավար՝  
Վարդան Օսկանյան  
Տեղեկագրի համակարգող՝  
Հրայր Զորյան  
Համակարգողի օգնական՝  
Անուշ Եղիզարյան  
ՀԴԲ ծրագրերի համակարգող՝  
Մազդա Աղաբաբյան  
Հայաստանի ամերիկյան  
համալսարան  
ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 40  
հեռ. 27-16-58  
տպաբանակ՝ 99

Հասցեատեր՝